ԼՈՒՍԻՆԵ-ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ

ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ

«Գրականության մեր ժամանակը» խորագրով ժողովածուն (Երևան, 2006) ամփոփում է Վ. Գաբրիելյանի վերջին մեկուկես տասնամյակի խոհերը՝ տարբեր առիթներով, հոդվածի տեսքով կամ իբրև ուսումնասիրություն ձևակերտված: Այն գաղափարական կամրջումով «Դասականների ժամանակը» գրքի (Երևան, 1997) շարունակությունն է, կյանքի ու գրականության մասին գրականագետի խորհրդածության տևումն ու հոլովումը: Տասնամյա հատույթով անջատված-ձուլված այս երկու գրքերի կապը կենսական է այնքանով, որքանով ամբողջական է խոհը՝ իր ներքին ծավալումներով, պարզ անմիջականությամբ, հիմնաշերտային համոզումով և կայուն կեցվածքով:

Նախորդ ժողովածուի առաջաբանում ուսումնասիրողը քննում է մեծերի արդիականության բազմահատույթ խորհուրդը, դասականության ֆենոմենը՝ բացելով դրա ենթակայական և առարկայական եզրերը: Երևույթի խորության ինքնակնհայտ եզրի մատնանշումից զատ նա կարևոր հավելում է անում. «Նրանք արդիական են նաև այսօր, մանավանդ այն պատճառով, որ մենք վերադարձել ենք նրանց ժամանակները» («Դասականների ժամանակը, էջ 13»):

Մեծերի՝ սոցիալ-պատմական տեղաշարժերի ծանրության տակ փշրվող երազների, «չստացված սոցիալիզմի», անկեղծ հավատավորության ու անմեղ-մեղավորության հարցերը լուծվում են միակ հնարավոր ճանապարհով. «Նրանց իրենց երազի համար արժևորենք» (նշ.տ.): Եվ լսենք, քանի դեռ չի լսվում մեր ժամանակի ձայնը՝ գեղարվեստի լեզվով պատասխանը մեր ժամանակի մասին, քանի որ չստացված սոցիալիզմի քմայքով շավղից դուրս սայթաքած ժամանակի մեջ ետ շպրտված լինելով՝ հայտնվել ենք նույն և համանման սոցիալ-քաղաքական հարթության մեջ, «բարոյական կորուստների այս գահավեժ ընթացքի» տագնապներում:

Սա 1997-ն է, իսկ ահա 2006-ին՝ «Գրականության մեր ժամանակը»: Հոդվածները խմբավորված են «Մեծերի խորհուրդը», «Անցյալը՝ ներկա», «Բանավեճի կարգով» և «Առաջին արձագանք» ենթախորագրերի ներքո: Եթե նախորդ գրքի հետ կամրջումը առաջին հայացքով բացվող իրողություն է, ապա խորագիրը գաղտնազերծվում է բավականին դժվար, և հոդվածաշարն իբրև գիրք կազմակերտվում-ամբողջանում, գիրք է դառնում վերջնական ընթերցումից հետո միայն:

Թե՛ նախորդ ժողովածուի և թե՛ հատկապես այս գրքի մեջ Գաբրիելյանը ժամանակի իրական ու հավերժական տարողությունը խտացնում է մերթ զգացողական միաձուլվող-չտարորոշվող շերտերով՝ անցյալից ապագա ձգվող ժամանակը ներկայի հատույթում ծանրացած-թանձրացած տեսնելով, մերթ իր խոհերի և իր ժամանակի ներկայությունը համաչափորեն բաշխում ժողովրդի պատմության հավերժական հարցերի վրա: Ահա ամենաթափանց և բազմաշերտ ժամանակի ֆենոմենը օգնում է սերունդների ժառանգորդման գրական ու պատմական կապերի մատնանշմանը:

Առաջին հայացքից մեկուսի թվացող հոդվածներից յուրաքանչյուրը մի շերտ ու մի գիծ է հավելում գրքի համապատկերին:

«Քրիստոնեությունը և հայ գրականությունը» ուսումնասիրությունը ինքնին արժեքավոր է իբրև բանասիրական քննություն, սակայն իր եզրակացությամբ և հիմնարար դատողությամբ («Հայ նոր գրականությունը ստեղծողները էությամբ քրիստոնյաներ են»), ի մի բերելով հայ եկեղեցու և հոգևոր հայրերի դերը մեր պատմության մեջ, թե՛ սրբազան ժառանգությունն է կարևորում, թե՛ ժառանգորդման կարևորությունը, որ մեր ժամանակի գրականության և գրականության մեր ժամանակի համար ավելի քան կենսական է:

«Սիամանթո-Վ. Թեքեյան-Շահան Շահնուր» վերնագրի շղթան հետաքրքիր աղերսներ, գրական ժառանգորդման և մարդկային հոգեկցության խաչուղիներ է բացում: Թեքեյանի դերի քննությունը հոգևոր սրատեսություն է տալիս՝ կենդանի դասականի անմիջական-անփոխարինելի ներկայության խորհուրդն ըմբռնելու համար: Չէ՞ որ Թեքեյանը մեկն է նրանցից, ովքեր իրենց կենդանության օրոք իսկ դասականության կշիռն ու առինքնումը ունեին:

Ուշագրավ է նաև «Չարենցի «ներկայությունը» 1937-54 թվականներին» հոդվածը, որը արժեքավոր փաստերի համադրումից արտածվող եզրահանգմամբ միտված է գրական ազդեցության տիրականության բարդ ու հետաքրքիր մեխանիզմի քննությանը:

Հաջորդ երեք հոդվածներն ամբողջացնում են ժամանակի շրջապտույտի, հավերժական վերադարձի թեման՝ մի դեպքում ժողովրդի պատմական ճակատագրի մեջ («Ստ. Զորյանի պատմավեպերը», «Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը»), մեկ այլ դեպքում գրողի կենսագրության և գաղափարագեղագիտական ինքնության մեկնություններում («Հրանտ Մաթևոսյանի գրական մուտքը»): Գրականագետի դիտարկմամբ Մաթևոսյանի մուտքը՝ առաջին իսկ պատմվածքը, արդեն կրում է «հեղինակի՝ նյութի նկատմամբ ունեցած այն հայացքը, պատմելու այն ձիրքը, որ մեզ ծանոթ է նրա հետագա գործերից: Այստեղ, հեղինակի խոսքերով, «շատ կարևոր» «վերադարձի թեման էր»: Ի՛ր վերադարձի: Անվե՛րջ վերադարձի՝ հողին, ծննդավայրին, հարազատ մարդկանց, կյանքին» («Գրականության մեր ժամանակը», էջ 76):

Պատմավեպի արդիականության թեման Վ. Գաբրիելյանը բացորոշում է Զորյանի և Դեմիրճյանի ապրած բարդ ժամանակի հանդրվանում՝ մատնանշելով փոքր ազգերի ձուլման քաղաքականությունը ռուսական վերջին կայսրության մեջ: Դիմադարձման մղումը, ինքնության պահպանման գերմարդկային ճիգը պատմական հղումներով և անդրադարձներով գեղարվեստորեն արծարծելով՝ նրանք իրենց ժամանակի խնդիրն են լուծել, ակնարկելով ահազանգել: Եվ լսելի է նրանց ձայնը նաև մեր ժամանակի մեջ, քանի որ ցավոք չի փոխվում մեր պատմության փիլիսոփայության ծածկագիրը. վարդանանց պատերազմը մեր ճակատագիրն է ու գոյության խորհուրդը:

Ահա այսպիսին է ուրեմն նաև գրականության մեր ժամանակը, և հավերժականի տիրական դիմագիծն իր հետքն է թողնում նաև մեր գրականության ու իրականության դեմքին: Իսկ այդ դեմքը շատ խորշոմներ ու ծամածռումներ ունի, որոնց գրականագետը նայում է՝ իր մեջ զգալով դասականների ներկայությունը, իր մեջ կրելով ու տեղավորելով թե նրանց ժամանակը և թե իր օրերի հևքը, տագնապը:

Մեր օրերի կնճիռները Գաբրիելյանը փորձում է լուսավորել ու

հարթել Թումանյանի անչար ու իմաստուն հայացքի զորությամբ, գրողի բարձր կոչմանը հավատարիմ Զորյանի համեստության մատնանշումով, նրա՝ ինքն իր հանդեպ ունեցած խստապահանջության օրինակման կոչով (««Պարանոյա». ինչո՞ւ, հանուն ինչի՞», «Դիմանկարի գույներ»՝ խորհրդածության համար»):

Կյանքի և գրականության՝ մեր ժամանակի կենսական խնդիրները նրա ուշադրության ծիրում են: Իր չափանիշները հստակ են. թե անցյալի ժառանգության և թե ժամանակակից գրականության հանդեպ վերաբերմունքը հատկորոշվում է գիտական բարեխղճության և բարձր գեղարվեստի չափորոշիչների առկայությամբ:

Արթնամտությամբ և ռացիոնալի ներքնատեսության սկզբունքով է գրականագետը քննում հայրենիք-սփյուռք օղակում երևակվող, մասնավորաբար ուղղագրությանը առնչվող հարցերը (Տարօրինակ առաջարկ կամ դարձ ի չրջանս յուր), արդի գրականության լեզվի հետ կապված իրողությունները: Ընթացքի մեջ դիտարկվող ու տևող գրական ավանդույթի լույսի տակ են բացվում թե արցախյան գոյամարտի թեմայի գեղարվեստական յուրացման հաջողված մի փորձի քննությունը («Լուսավորչի կանթեղի լույսը»), թե Ա. Ավագյանի «Հոգենյութի խորհուրդը» և թե «մեր ոգու խորհրդանիշներից մեկի»՝ Վահագնի «ծնունդը» մեր օրերում («Վահագնի նոր վերադարձը»):

Ոգու արթնության, ինքնության պահպանման գերխնդիրը այսօր էլ կա, և գրականության մեր ժամանակը, մեր օրերի գրականության դիմագիծը հեղինակի համոզմունքով անպայմանորեն պետք է կերպաձևել «մեր ժողովրդի առանձնահատկությունների և շահերի», «փոքր ազգի բարոյական չափանիշների» նկատառումով:

2005 թվականին «Գրական թերթում» տպագրված «Միասնական հայ գրականություն» խորագրով հոդվածում, որը ևս տեղ է գտել «Գրականության մեր ժամանակը» ժողովածուում, Գաբրիելյանը գրում է. «Մեծերը միշտ արդիական են: Անսանք մեծերի խորհրդին: Հարստացնենք միասնական հայ գրականությունը հողի մարդու և աշխարհի չորս ծագերում ապրող հայության հոգեկերտվածքի դրսևորումներով, դարավոր հայ գրականության ու այսօրվա համաշխարհային գրականության լավագույն օրինակների փորձի յուրացումով» (էջ 211):

Միասնական հայ գրականությունը մեր մտավորականներից շատերի պատգամ-երազի անեղրության մեջ տևող իրողություն է: Այս գրքի հեղինակը ևս տարիների իր վաստակով այդ երազի հավատավորներից է, և այսպես է տեսել նա հավերժության հոլովույթում գրականության մեր ժամանակը: